

Դատական Գործ N: ՎԴ/2635/05/09

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	08-06-2009
Հայցվոր/դիմող	
Անուն:	Արագ ՍՊԸ-ի տնօրեն Արարատ Գալոյան
Հասցե:	Կիևյան 4/16
Պատասխանող	
Անուն:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն
Հասցե:	Կառավարության տուն 3
Քաղաքացիական գործի ստացման կարգը:	Առաջին անգամ
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	վարչական ակտն անվավեր ճանաչելու և անվավեր վարչական ակտի հետևանքները վերացնելու պ/մ
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	1.1
Պետական տուրք:	4000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:	
Հակընդդեմ պահանջ:	
Պետական տուրք:	
Ամսաթիվ:	09-06-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	Արծրուն Միրզոյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	
Որոշման ամսաթիվ:	15-06-2009
Դատաքննության ամսաթիվ:	13-11-2009

Ծանուցագիրը ուղարկվել է:	30-10-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համար:	106
Դատաքննության ամսաթիվ:	24-03-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	11-02-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	14:30
Նիստերի դահլիճի համար:	106
Դատաքննության ամսաթիվ:	25-05-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	27-04-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	106
Դատաքննության ամսաթիվ:	28-07-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	01-07-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համար:	106
Դատաքննության ամսաթիվ:	12-08-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	28-07-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	17:50
Նիստերի դահլիճի համար:	106
Հայցի լուծման ամսաթիվ:	12-08-2010
Հայցի լուծումը:	Մերժվել է
Հոդված	
Հոդված	<< վարչ. դատ. օր-ի 59, 112-115, 118
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Դատական ակտ:	Վարչական գործ թիվ ՎԴ/2635/05/09 Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«12» օգոստոսի 2010թ. ք. Երևան
Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, հետևյալ
կազմով՝
նախագահությամբ՝ դատավոր Ա. Միրզոյանի,
քարտուղարությամբ՝ Ք. Ջոհրանյանի,
մասնակցությամբ՝

հայցվոր՝ SCHERING AKTIENGESELLSCHAFT ներկայացուցիչներ՝
«Արագ» ՍՊԸ
ընկերության տնօրեն Արարատ Գալոյանի,
(ք. Երևան 0028, Կիկյան 4, բն. 16),
Տիգրան Փոլադյան,

պատասխանող՝ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ՝
Էկոնոմիկայի նախարարության Արա Աբգարյանի,
Մտավոր սեփականության գործակալության
(ք. Երևան 0010, Գլխավոր Պողոտա,
Կառավարության տուն 3),

երրորդ անձ՝ «Էվալար» փակ բաժնետիրական
ընկերության
(ՌԴ, ք. Բիիսկ, Ալթայի շրջան,
Սոցիալիստիչեսկայա 23/6,
ՌՍ 659332),

դռնբաց դատական նիստում՝ 28.07.2010 թվականին, քննեց
վարչական գործն ըստ հայցի SCHERING AKTIENGESELLSCHAFT
ընկերության ընդդեմ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի
նախարարության Մտավոր սեփականության գործակալության,
երրորդ անձ «Էվալար» փակ բաժնետիրական ընկերության՝
«Վարչական ակտն անվավեր ճանաչելու և անվավեր վարչական
ակտի հետևանքները վերացնելու» պահանջի մասին:

ՊԱՐԶԵՑ՝

1. Գործի դատավարական նախապատմությունը և հայցվորի
իրավական դիրքորոշումը
SCHERING AKTIENGESELLSCHAFT ընկերությունը հայցադիմում է
ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հայաստանի
Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության Մտավոր
սեփականության գործակալության, երրորդ անձ «Էվալար» փակ
բաժնետիրական ընկերության՝ «Վարչական ակտն անվավեր
ճանաչելու և անվավեր վարչական ակտի հետևանքները
վերացնելու» պահանջի մասին և հայտնել, որ 2008 թվականի
դեկտեմբերի 8-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր
սեփականության գործակալությունը մերժել է SCHERING
AKTIENGESELLSCHAFT ընկերության ներկայացուցիչ Ա. Գալոյանի
բողոքը գործակալության՝ IR 915768 միջազգային գրանցում ունեցող
OVESO ապրանքային նշանի գրանցման գործողությունը
Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 05-րդ դասի բոլոր 2008
թվականի մարտի 21-ի նախնական մերժման մասին որոշումն
անփոփոխ թողնելու մասին կրկնական փորձաքննության որոշման
դեմ:

2008 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ կրկնական
փորձաքննությունը «Ապրանքային և սպասարկման նշանների»
ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի և
«Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման
ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ
առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005 թվականի
ապրիլի 12-ի թիվ 85-Ն հրամանի հիման վրա վերը նշված
ապրանքային նշանի գործողությունը ՀՀ-ում ԱԾՄԴ 05-րդ դասում
նշված բոլոր ապրանքների նկատմամբ նախնական մերժման մասին
որոշումը թողնել անփոփոխ՝ ՀՀ միջազգային պայմանագրերի

համաձայն նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող ավելի վաղ առաջնությամբ ԿԹԺԿԿ /կիրիլիցա/ միջազգային գրանցմամբ շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի առկայության պատճառով:

Ընկերությունը կրկնական փորձաքննության որոշումը բողոքարկել է Բողոքարկման խորհուրդ: Բողոքարկողը փաստել է « որ իր խնդրանքը կայանում է ԱԾՄԴ 05-րդ դասում նշված ապրանքների ցանկը հետևյալ կերպ սահմանափակելու մեջ «Ղեղազործական պատրաստուկներ այն է՝ պատրաստուկներ ուռուցքաբանական հիվանդությունների և սրտանոթային համակարգի հիվանդությունների բուժման» Պարկինսոնի հիվանդության» ցրված սկլերոզի և իմունոլոգիական անբավարարության այլ տեսակների համար» հորմոնային պատրաստուկներ գինեկոլոգիական նպատակների համար»: Արդյունքում OVESO ապրանքային նշանի ապրանքների սահմանափակված ցանկում ընգրկված ապրանքները տարբերվում են այն ապրանքներից որոնց համար գրանցված է ԿԹԺԿԿ ապրանքային նշանը՝ «Թուրմեր բժշկական նպատակների համար. Բույսերի էքստրակտներ դեղագործական և բժշկական նպատակների համար»:

Այս հիմքով հայտատու ընկերությունը խնդրել էր OVESO ապրանքային նշանի գործողությունը տարածել վերը նշված սահմանափակված ցանկում նշված դեղագործական պատրաստուկների նկատմամբ:

Բողոքարկման խորհուրդը մերժել է բողոքը հետևյալ հիմնավորումներով՝

- երկու ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման են, քանի որ միայն մեկ տառով են տարբերվում ընդ որում այդ մեկ տառն այնքան թույլ է արտասանվում որ հնչյունային տեսանկյունից շփոթելու հնարավորությունն անխուսափելի է.

- չնայած OVESO ապրանքային նշանի ապրանքների ցանկը կրճատվել է, սակայն շփոթելու հնարավորությունը չի վերացել, քանի որ տվյալ դեպքում հնարավոր չէ հստակ ասել, թե ԿԹԺԿԿ ապրանքային նշանով պաշտպանվող թուրմերը որ հիվանդությունների համար են նախատեսված.

- եթե նույն հիվանդությունների համար օգտագործվեին, ապա շփոթելու դեպքում, դա այդքան վտանգավոր չի լինի՝ սակայն, քանի որ տարբեր նպատակների համար են օգտագործվում՝ ապա շփոթությունը կբերի ավելի ծանր հետևանքի.

- Բողոքարկման խորհուրդը չի կարևորել հայտատուի ներկայացուցչի այն փաստարկը՝ որ դեղամիջոց արտադրող ընկերություններն իրենց ապրանքների պիտակների և տուփերի վրա ապրանքային նշանի հետ զետեղում են նաև ֆիրմային լոգոն՝ ինչը զգալիորեն նվազեցնում է շփոթության հավանականությունը՝ տվյալ դեպքում դա հանրահայտ BAYER լոգոն է: Խորհուրդը գտավ՝ որ սպառողների քիչ մասն է ճանաչում ֆիրմային անունները կամ առաջնորդվում այդ սկզբունքով:

Վերը նշվածից ելնելով Խորհուրդը եզրակացրել է « որ կրկնական փորձաքննության որոշումը կայացվել է օրինական հիմքերով և առաջնորդվել է օրենքի 12 հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով:

Հայտնել է « որ Բողոքարկման խորհրդի վիճարկվող որոշումը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքների մի շարք պահանջներ:

Ա. «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 85-Ն հրամանի իմաստով, որպեսզի երկու բառային ապրանքային նշանների շփոթության աստիճանի նմանությունը որոշվի, պետք է իրականացվի բառային նշանների

համեմատություն:

Համեմատության կարգը սահմանված է թիվ 85-Ն հրամանի 96-101-րդ կետերով: Ըստ հրամանի 97-րդ կետի՝ բառային նշանների նմանությունը կարող է լինել ծայնային (հնչյունային)՝ գրաֆիկական (տեսողական) և իմաստային (արտահայտած մտքի): 98-րդ կետը տալիս է Ձայնային նմանության որոշման տասնմեկ չափանիշներ: 99-րդ կետը վերաբերում է գրաֆիկական նմանությանը՝ որն ըստ հրամանի որոշվում է հետևյալ չափանիշներով՝

- 1) ընդհանուր տեսողական տպավորությամբ.
- 2) օգտագործված տառանմուշների (շրիֆտի) տեսակով.
- 3) տառերի բնույթով պայմանավորված գրաֆիկական գրելաձևով (օրինակ՝ տպագիր կամ ձեռագիր՝ մեծատառ կամ փոքրատառ՝ ոճավորումը և այլն).
- 4) միմյանց նկատմամբ տառերի դասավորվածությամբ.
- 5) այբուբենով՝ որի տառերով գրված է բառը.
- 6) գույնով կամ գունային համակցությամբ:

100-րդ կետը վերաբերում է իմաստային նմանությանը՝ որի որոշման համար ևս չափանիշներ են սահմանված:

Ողջամիտ է՝ « որ եթե Բողոքարկման խորհուրդը եզրահանգում է կատարել երկու բառային ապրանքային նշանների նմանության մասին՝ ապա պետք է որ անդրադառնար բոլոր այդ կետերին և համեմատությունը կատարել դրանցում նշված չափանիշներով: Մինչդեռ Բողոքարկման խորհրդի որոշման մեջ անդրադարձ է կատարված միայն ապրանքային նշանների միջև եղած մեկ տառի տարբերությանը: Ենթադրվում է՝ որ դա վերաբերում է նշանների ծայնային նմանության չափանիշին: Իսկ գրաֆիկական և իմաստային նմանության մասին ոչ մի խոսք չկա՝ կամ՝ այլ կերպ ասած՝ Բողոքարկման խորհուրդն այդ չափանիշները չի քննարկել: Մինչդեռ՝ օրինակ՝ գրաֆիկական նմանության տեսանկյունից երկու ապրանքային նշանների տարբերությունն ուղղակի ակնհայտ է: Բացի դրանից՝ Բողոքարկման խորհուրդը հաշվի չի առել Հրամանի 101-րդ կետը՝ որի համաձայն անհրաժեշտ է հաշվի առնել որոշ շատ կարևոր հանգամանքներ՝ շփոթելու աստիճան նմանությունը որոշելիս՝ հաշվի է առնվում նաև այն ապրանքների առանձնահատկությունը՝ որոնց համար գրանցման է ներկայացված նշանը: Եթե նշանը գրանցման է ներկայացված այնպիսի ապրանքների համար՝ որոնք իրացվում են միայն հատուկ սպառման շրջաններում՝ մասնավորապես՝ հատուկ մասնագետների օգնությամբ՝ կամ միայն մասնագիտացված կազմակերպություններին՝ օրինակ դեղատան մասնագետների կողմից՝ ապա անհրաժեշտ է հաշվի առնել՝ որ տվյալ ապրագայում «շփոթելու աստիճան նմանությունը» տարածվում և կիրառվում է հատկապես այդ մասնագետների կամ կազմակերպությունների նկատմամբ՝ այլ ոչ թե բոլոր հնարավոր սպառողների: Եթե նշանը գրանցման է ներկայացված այնպիսի ապրանքների համար՝ որոնք չեն համարվում լայն սպառման ապրանքներ՝ այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում՝ մինչև տվյալ ապրանքի ձեռքբերումը՝ սպառողը մանրագնին ուսումնասիրում է ապրանքը՝ ապա շփոթելու աստիճան նմանությունը որոշելիս՝ հաշվի է առնվում նաև սպառողի անխուսափելի աջալուրջ վերաբերմունքը:

Այսինքն՝ օրենսդրությունը շփոթության աստիճանի նմանության որոշման համար սահմանել է առնվազն ևս երկու չափանիշ՝ ապրանքի իրացումը մասնագետի կողմից և լայն սպառման ապրանք չլինելը: Առաջին դեպքում նմանությունը տարածվում ու կիրառվում է հատկապես մասնագետի նկատմամբ՝ իսկ երկրորդ դեպքում՝ հաշվի պետք է առնվի սպառողի անխուսափելի աջալուրջ վերաբերմունքը:

Այս երկու չափանիշներն էլ տվյալ դեպքում կիրառելի են՝ քանի որ դեղամիջոցն իրացվում է միայն դեղատան մասնագետի միջոցով և այն չի համարվում լայն սպառման ապրանք:

Բողոքարկման խորհուրդը՝ նմանության հարցը որոշելիս՝ ընդհանրապես հաշվի չի առել այս կանոնները՝ չի անդրադարձել

դրանց ու չի հիշատակել իր որոշման մեջ:

Վերոգրյալից ակնհայտ է « որ Բողոքարկման խորհուրդը» շփոթության աստիճանի նմանության հարցի վերաբերյալ եզրահանգում անելիս՝ չի պահպանել օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի պահանջները՝ այսինքն՝ իր եզրահանգումների հիմքում չի դրել օրենսդրությամբ սահմանված պարտադիր չափանիշները:

Այս փաստը Բողոքարկման խորհրդի որոշումն անհիմն է դարձնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի իմաստով՝ քանի որ դրանում բացակայում են համապատասխան որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր էական փաստական ու իրավական հանգամանքները: Իսկ վարչական ակտից ընդհանրապես պարզ չէ՝ թե եթե Բողոքարկման խորհուրդը չի առաջնորդվել օրենսդրությամբ սահմանված կանոններով ու ընթացակարգով՝ ապա ինչ նկատառումներից ելնելով է իր որոշումը կայացրել:

Անդրադառնալով այն հիմնավորմանը՝ թե շփոթելու հնարավորությունն անխուսափելի է՝ քանի որ նշանների տարբերվող տառը «թույլ է արտասանվում», հայտնել է, որ որևէ կերպ չի տեղավորվում ոչ Օրենքի՝ ոչ էլ Հրամանի տրամաբանության մեջ՝ առնվազն այդպիսի չափանիշ օրենսդրությունը չի սահմանում՝ իսկ Բողոքարկման խորհուրդը չի հստակեցրել՝ թե որ չափանիշի տեսանկյունից է այդպիսի փաստարկ արվում:

Բ. Բողոքարկման խորհուրդը եզրահանգել է՝ որ չնայած OVESO ապրանքային նշանի ապրանքների ցանկը կրճատվել է՝ սակայն շփոթելու հնարավորությունը չի վերացել՝ քանի որ տվյալ դեպքում հնարավոր չէ հստակ ասել՝ թե ԿԹԺԿԿԿ ապրանքային նշանով պաշտպանվող թուրմերը ո՞ր հիվանդությունների համար են նախատեսված: Եվ եթե դեղերը նույն հիվանդությունների համար օգտագործվեին՝ ապա շփոթելու դեպքում դա այդքան վտանգավոր չի լինի՝ սակայն՝ քանի որ տարբեր նպատակների համար են օգտագործվում՝ ապա շփոթությունը կբերի ավելի ծանր հետևանքի: Թվում է՝ թե Բողոքարկման խորհուրդը դիտավորությամբ է աղավաղում «Ապրանքների ցանկ» տերմինի նշանակությունը և իմաստը: Նախ՝ Օրենքի և Հրամանի իմաստով ապրանքների ցանկերը չեն կարող նույնը լինել՝ ինչը Բողոքարկման խորհուրդը լիովին ընդունելի է համարում: Մասնավորապես՝ Հրամանի 88-րդ կետի իմաստով՝ ցանկերը պետք է հստակ կերպով հնարավորություն տան անհատականացնելու տվյալ ապրանքային նշանը: Իսկ այս տեսանկյունից անհեթեթ է դառնում Բողոքարկման խորհրդի այն փաստարկը՝ որ հնարավոր չէ հստակ ասել՝ թե ԿԹԺԿԿԿ ապրանքային նշանով պաշտպանվող թուրմերը որ հիվանդությունների համար են նախատեսված՝ քանի որ նման բան ուղղակի հնարավոր չէ օրենսդրության տեսանկյունից՝ և եթե նույնիսկ դա առկա է՝ ապա այդպիսի ապրանքային նշան ուղղակի գրանցվել չէր կարող:

Բացի դրանից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ արգելվում է վարչական մարմնի ընդունած վարչական ակտերի հիմնավորումն այն փաստարկներով՝ որոնք չեն առնչվում տվյալ մարմնի իրավասությանը:

Մինչդեռ տվյալ դեպքում վարչական մարմինը՝ որն առողջապահության կամ դեղագործության բնագավառում իրավասություններ ու մասնագիտացում չունի՝ իրեն իրավասություն է վերապահել որոշելու՝ արդյոք հստակ է՝ թե այս կամ այն դեղն ինչ հիվանդության համար է օգտագործվում՝ թե՛ ոչ:

Այսինքն՝ տվյալ դեպքում՝ Բողոքարկման խորհուրդը ոչ միայն չի առաջնորդվել Օրենքով ու Հրամանով նախատեսված կանոններով ու ընթացակարգերով՝ դրանով իսկ իր որոշումը դարձնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի իմաստով չհիմնավորված՝ այլ նաև դուրս է

եկել իր իրավասությունների շրջանակից՝ խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի իմպերատիվ նորմը:

Նշել է, որ Հրամանի վերը նշված 101-րդ կետը՝ որի համաձայն՝ անհրաժեշտ է հաշվի առնել որոշ շատ կարևոր հանգամանքներ՝ «շփոթելու աստիճան նմանությունը որոշելիս՝ հաշվի է առնվում նաև այն ապրանքների առանձնահատկությունը» որոնց համար գրանցման է ներկայացված նշանը: Եթե նշանը գրանցման է ներկայացված այնպիսի ապրանքների համար՝ որոնք իրացվում են միայն հատուկ սպառման շրջաններում՝ մասնավորապես՝ հատուկ մասնագետների օգնությամբ՝ կամ միայն մասնագիտացված կազմակերպություններին՝ օրինակ՝ դեղատան մասնագետների կողմից՝ ապա անհրաժեշտ է հաշվի առնել՝ որ տվյալ պարագայում «շփոթելու աստիճան նմանությունը» տարածվում և կիրառվում է հատկապես այդ մասնագետների կամ կազմակերպությունների նկատմամբ՝ այլ ոչ թե բոլոր հնարավոր սպառողների: Եթե նշանը գրանցման է ներկայացված այնպիսի ապրանքների համար՝ որոնք չեն համարվում լայն սպառման ապրանքներ՝ այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում՝ մինչև տվյալ ապրանքի ձեռքբերումը՝ սպառողը մանրագնին ուսումնասիրում է ապրանքը՝ ապա շփոթելու աստիճան նմանությունը որոշելիս՝ հաշվի է առնվում նաև սպառողի անխուսափելի աչալուրջ վերաբերմունքը:

Անդրադառնալով Բողոքարկման խորհրդի այն փաստարկին՝ թե «սրտանոթային համակարգի հիվանդությունների բուժման դեղերը բաց են թողնվում առանց դեղատոմսի», հայտնել է, որ ակնհայտ է՝ որ Հրամանի իմաստով էական է ոչ միայն դեղատոմսով՝ այլ նաև դեղատան միջոցով դեղի իրացման փաստը և այս դեպքում էլ «շփոթելու աստիճան նմանությունը» տարածվում և կիրառվում է հատկապես մասնագետների նկատմամբ: Իսկ դեղը՝ անվիճելիորեն, լայն սպառման ապրանք չի հանդիսանում ու հետևաբար պետք է հաշվի առնել սպառողի անխուսափելի աչալուրջ վերաբերմունքը: Ոչ այս՝ ոչ էլ նախորդ փաստարկների կապակցությամբ Բողոքարկման խորհուրդը չի ապացուցել կամ հիմնավորել՝ որ վիճարկվող ապրանքային նշանները շփոթության աստիճանի նման են մասնագետների համար և ողջամտորեն ցույց չի տվել՝ որ սպառողի աչալուրջ վերաբերմունքի պայմաններում ևս հնարավոր է շփոթության առաջացում:

Գ. Բողոքարկման խորհուրդը որոշել է չկարևորել այն փաստարկը՝ որ OVESO ապրանքային նշանի ապրանքների վրա առկա է նաև հանրահայտ ֆիրմային նշան՝ որը զգալիորեն նվազեցնում է շփոթության հնարավորությունը՝ որոշելով՝ թե «սպառողների քիչ մասն է ճանաչում արտադրող ֆիրմաների անունները և նրանց նշանները կամ իրենց ընտրությունը կատարելիս առաջնորդվում այդ սկզբունքով»:

Նախ Բողոքարկման խորհուրդը որևէ կերպ չի հստակեցրել՝ թե այսպիսի գնահատականներն ինչ փաստարկների վրա են հիմնված՝ առավել ևս՝ որ չի հերքվել ֆիրմային անվանման սպառողի համար քաջ հայտնի լինելու հանգամանքը: Հետևաբար՝ Բողոքարկման խորհրդի եզրահանգումը կամայական բնույթ ունի և զուրկ է իրավական կամ փաստական հիմնավորումից: Ոչ Օրենքը՝ և ոչ էլ Հրամանը՝ այսպիսի չափանիշ ևս չեն նախատեսում ապրանքային նշանների նմանությունը կամ շփոթության առաջացման հնարավորությունը դիտարկելիս:

Սա ևս Բողոքարկման խորհրդի վիճարկվող որոշումը դարձնում է անհիմն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի տեսանկյունից:

Վերը շարադրվածները Բողոքարկման խորհրդի վիճարկվող որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի իմաստով անվավեր ճանաչելու ակնհայտ ու անվիճելի հիմքեր են տալիս՝ քանի որ Բողոքարկման հանձնաժողովի բոլոր եզրահանգումներն ու հիմնավորումները կամ կատարվել են օրենքի խախտմամբ՝ կամ օրենքի սխալ

մեկնաբանմամբ» կամ սխալ կիրառմամբ:

Դ. Հայտնել է « որ վերը թվարկված բոլոր փաստարկները՝ ողջված Բողոքարկման խորհրդի վիճարկվող որոշման մեջ առկա օրենքի խախտումներին» իր հետագա որոշումներում ընդունել է նաև հենց ինքը՝ Բողոքարկման խորհուրդը» նմանատիպ հարցերի վերաբերյալ՝ կիրառելով արդեն լրիվ այլ մոտեցում հիմնված հենց վերը նշված փաստարկների վրա:

Այսինքն՝ Բողոքարկման խորհուրդն « ըստ էության» ևս գիտակցել է իր դիրքորոշման սխալ լինելը և հետագա իր որոշումներում այլ՝ տվյալ դեպքում օրենքով հիմնավորված մոտեցում է ցուցաբերել նույն խնդրի վերաբերյալ: Որպես օրինակ նշել է Բողոքարկման խորհրդի 2009 թվականի փետրվարի 26-ի որոշումը և հայտնել, որ որոշումը կայացվել էր OLZIN ապրանքային նշանի սեփականատիրոջ բողոքի հիման վրա» որով նա խնդրել է անվավեր ճանաչել OLANZIN ապրանքային նշանի գրանցումը» քանի որ այդ նշանները նման են Հրամանի 97-100 կետերի տեսանկյունից» և տարբերվում են միայն մեկ միջանկյալ վանկով: Ընդ որում, այդ ապրանքային նշանի տակ եղած դեղերն իմաստային առումով լիովին ևս նման էին /ի տարբերություն նշված դեպքի« երբ նմանություն չկա/» քանի որ պատրաստված են նույն նյութի հիմքի վրա և երկուսն էլ հոգեմետ դեղեր են հանդիսանում:

Այս դեպքում արդեն Բողոքարկման խորհուրդը կիրառել է Հրամանի 101-րդ կետը և որոշել « որ շփոթություն պետք է առաջանա ոչ թե սպառողի» այլ մասնագետի մոտ: Իսկ որպեսզի այդպիսի շփոթության կամ դրա հնարավորության առկայությունը հաստատված լինի» բավարար չեն միայն տեսական հայտարարությունը ու դրա համար փաստացի հիմքեր ու իրական ապացույցներ են պետք» օրինակ՝ օրինակներ» որ դեղատներում իրոք շփոթություն է եղել:

Տվյալ դեպքում ևս « Բողոքարկման խորհրդի եզրահանգումները տեսական մոտեցում են հանդիսանում և ամրապնդված չեն փաստացի հիմքերով» ինչը նույն ինքը՝ Բողոքարկման խորհուրդն իր հետագա որոշմամբ արդեն իրավացիորեն պահանջել է: Ըստ էության « բերված օրինակում» չնայած որ հանգամանքները տվյալ դեպքի հետ « ըստ էության» համընկնում են « ավելին՝ օրինակում ապրանքային նշաններն իմաստային առումով ևս նման են» Բողոքարկման խորհուրդը մերժել է անվավեր ճանաչել OLANZIN ապրանքային նշանի գրանցումը» քանի որ կիրառել է 101-րդ կետը» որը և պարտավոր էր անել և այդ կետի չափանիշների ներքո» որոնք տվյալ դեպքում ուղղակի համընկնում են» որոշել է « որ ապրանքային նշանների միջև շփոթության աստիճանի նմանություն չկա:

Բողոքարկման խորհրդի վիճարկվող որոշմամբ մերժվել է հավատարմատար Ա. Գալոյանի բողոքը» և OVESO ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը ՀՀ-ում ԱԾՄԴ 05-րդ դասի բոլոր ապրանքների համար մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշումը թողնվել է ուժի մեջ:

Այսինքն՝ Բողոքարկման խորհուրդն իր այս վարչական ակտով « ըստ էության» վերահաստատել է մեկ այլ վարչական ակտ՝ կրկնական փորձաքննության որոշումը:

Հայտնել է « որ տվյալ դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 64 և 98 հոդվածների իմաստով Բողոքարկման խորհրդի այս որոշման անվավեր ճանաչման հետևանք է հանդիսանում կրկնական փորձաքննության որոշման փոփոխումը և բնականաբար նաև կրկնական փորձաքննության հայտում ու Բողոքարկման խորհրդում ընկերության ներկայացրած պահանջների բավարարումը:

Հայցվորը դատարանին խնդրել է՝ ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7 « 57» 63» 64» 98 հոդվածներով «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով « ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքով»

1. Անվավեր ճանաչել Բողոքարկման խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 8-ի որոշումը:

2. OVESO ապրանքային նշանի գրանցման գործողությունը տարածել ՀՀ-ում ԱԾՄԴ 05-րդ դասի բոլոր ապրանքների համար՝ սույն հայցադիմումում վերն արդեն հիշատակված ապրանքների սահմանափակված ցանկի համար:

Գործի քննությանը ներկայացած հայցվորի ներկայացուցիչը պնդել է ներկայացված պահանջը և դատարանին խնդրել հայցն ամբողջությամբ բավարարել:

2. Պատասխանողի փաստարկները և իրավական դիրքորոշումը Պատասխանող Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը 14.07.2009 թվականին դատարանին է ներկայացրել հայցադիմումի պատասխան և հայտնել, որ 26.04.2007 թվականին «Էվալար» ՓԲԸ-ի անվամբ միջազգային պայմանագրի ուժով իրավական պահպանություն է ստացել « ԿթժԻԿԻ» բառային և պարանքային նշանը միջազգային գրանցման թիվ 877609» 16.12.2005 թվականի առաջնությամբ:

Բողոքարկման խորհուրդը իր 2008թ. դեկտեմբերի 8-ի նիստում քննարկել է «SCHERING AKTIENGESELLSCHAFT» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա. Գալոյանի 2008 թվականի նոյեմբերի 3-ի բողոքը գործակալության ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի IR 915768 միջազգային գրանցում ունեցող OVESO ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի

Հանրապետությունում ԱԾՄԴ 05-րդ դասի բոլոր ապրանքների նկատմամբ 2008 թվականի մարտի 21-ի նախնական մերժման մասին որոշումը անփոփոխ թողնելու մասին կրկնական փորձաքննության որոշման վերանայման և IR 915768 միջազգային գրանցում ունեցող OVESO ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 05-րդ դասի սահմանափակված ապրանքների նկատմամբ տարածելու խնդրանքով և 08.12.2008 թվականին ընդունել է բողոքը մերժելու մասին ու OVESO (IR 915768) ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 05-րդ դասի բոլոր ապրանքների համար մերժելու մասին 2008 թվականի օգոստոսի 1-ի կրկնական փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու մասին որոշում (այսուհետ տեքստում նաև՝ վիճարկվող որոշում):

Պատասխանող ներկայացնելով առարկությունները հայցադիմումի պահանջի և այդ պահանջի հիմքերի և փաստերի դեմ իր հիմնավորումներով, հայտնել է՝ որ գործակալությունը չի ընդունում հայցադիմումով ներկայացված պահանջներն ամբողջությամբ:

1. Հայցադիմումի «Ա.» թվագրված բաժնի վերաբերյալ առարկել է հետևյալ հիմնավորմամբ.

Բողոքարկողը բողոքարկման խորհրդում չի վիճարկել «ԿթժԻԿԻ» բառային ապրանքային նշանի և «OVESO» ապրանքային նշանի իրար շփոթելու աստիճան նման լինելու փաստը՝ այդ հիմքի մասով համաձայն լինելով փորձաքննության որոշմանը: Սակայն բողոքարկման խորհուրդը մեկ անգամ ևս փաստել է՝ որ ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման են՝ քանի որ տարբերությունը միայն մեկ տառի (հնչյունի) մեջ է: Անդրադառնալով «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման» ներկայացման և քննարկման կարգի» 98-100-րդ կետերով սահմանված պարտադիր բոլոր չափանիշներին անդրադառնալու հայցվորի պնդմանը՝ նշել է՝ որ նույն կարգի 101-րդ կետը սահմանում է «98-100-րդ կետերում թվարկված հատկանիշները հաշվի են առնվում ինչպես առանձին» այնպես էլ տարբեր համակցություններում»՝ նշված հատկանիշներից մեկի կամ մի քանիսի առկայությունը՝ որը շփոթելու աստիճանի

նմանություն է առաջացնում, բավարար է ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման ճանաչելու համար և մնացած այլ հատկանիշները կարող են հաշվի չառնվել:

Անդրադառնալով կարգի 101-րդ կետին, հայտնել է հետևյալը՝ կարգի 101-րդ կետը սահմանում է. «... անհրաժեշտ է հաշվի առնել որոշ շատ կարևոր հանգամանքներ» շփոթելու աստիճան նմանությունը որոշելիս հաշվի է առնվում նաև այն ապրանքների առանձնահատկությունը» որոնց համար գրանցման է ներկայացված նշանը: Եթե նշանը գրանցման է ներկայացված այնպիսի ապրանքների համար» որոնք իրացվում են միայն հատուկ սպառման շրջաններում» մասնավորապես հատուկ մասնագետների օգնությամբ» կամ միայն մասնագիտացված կազմակերպություններին» օրինակ բժշկի դեղատոմսերով» դեղատան մասնագետների կողմից» կամ տրանսպորտային» կապի» էներգետիկայի և այլ բնագավառների մասնագիտացված կազմակերպություններին իրացվող հատուկ ապրանքները» ապա անհրաժեշտ է հաշվի առնել» որ տվյալ պարագայում «շփոթելու աստիճան նմանությունը» տարածվում է և կիրառվում հատկապես այդ մասնագետների կամ կազմակերպությունների նկատմամբ» այլ ոչ թե բոլոր հնարավոր սպառողների: Եթե նշանը գրանցման է ներկայացված այնպիսի ապրանքների համար» որոնք թանկարժեք են կամ չեն համարվում լայն սպառման ապրանքներ» այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում» մինչև տվյալ ապրանքի ձեռքբերումը» սպառողը մանրագնին ուսումնասիրում է ապրանքը» ապա շփոթելու աստիճան նմանությունը որոշելիս հաշվի է առնվում նաև սպառողի անխուսափելի աչալուրջ վերաբերմունքը»» այսինքն՝ կարգի 101-րդ կետը ոչ թե պարտադրում է» որ նման դեպքերում պետք է ճանաչվի շփոթելու աստիճանի նման կամ ոչ» այլ նշում է « որ պետք է հաշվի առնվի վերը նշված հանգամանքները» այսինքն՝ շփոթելու աստիճանի նմանության տարածումը և կիրառումը հատկապես այդ մասնագետների կամ կազմակերպությունների նկատմամբ» այլ ոչ թե բոլոր հնարավոր սպառողների» վիճարկվող որոշման մեջ նշվել է « որ «Տվյալ դեպքում հնարավոր չէ հստակ ասել» թե «ԿԹԺԿԿ» հակադրված ապրանքային նշանով պաշտպանվող թուրմերը ո՞ր հիվանդությունների համար են նախատեսված: Եթե նույնատիպ դեղեր են և նույն նպատակների համար են օգտագործվում» ապա նույնիսկ շփոթելու դեպքում, դա այդքան վտանգավոր չէ: Իսկ եթե ապրանքները (դեղերը) տարբեր նպատակների համար են օգտագործվում» ապա» կոլեգիայի կարծիքով» շփոթությունը կբերի ավելի ծանր հետևանքների» քանի որ մեկ դեղի փոխարեն գնորդը կարող է ձեռք բերել լրիվ մեկ այլը» հատկապես հաշվի առնելով» որ» օրինակ՝ սրտանոթային համակարգի հիվանդությունների բուժման համար դեղերը բաց են թողնվում առանց դեղատոմսի»» այսինքն՝ որոշման մեջ ապրանքների առանձնահատկություններին անդրադարձ կատարվել է և հաշվի առնելով այն, նշվել է « որ նույնիսկ այդ պարագայում շփոթելու աստիճանի նմանությունը կարող է ծանր հետևանքների բերել» հաշվի առնելով նաև» որ սրտանոթային համակարգի հիվանդությունների բուժման համար դեղերը բաց են թողնվում առանց դեղատոմսի» այսինքն՝ սպառողը դեղատանը շփոթելով կարող է «ԿԹԺԿԿ» դեղի փոխարեն պահանջել «OVESO» դեղը» և դեղատան աշխատողը չի կարող իմանալ, թե ինչ նպատակով է գնվում այդ դեղը: Այսինքն՝ բոլոր այն պատճառները» որոնք հիմք են հանդիսացել բողոքը մերժելու համար» որոշման մեջ առկա են: Ուստի հայցվորի պնդումը անհիմն է:

2. Հայցադիմումի «Բ.» թվագրված բաժնի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Հայցվորը նշել է « որ «կարգի 88-րդ կետի իմաստով» ապրանքների ցանկերը պետք է հստակ կերպով հնարավորություն տան անհատականացնելու տվյալ ապրանքային նշանը» սա պարագապես անհեթեթություն է « ավելին՝ կարգի նշված կետում նման բան ընդհանրապես ձևակերպված չէ և չի կարող լինել: Կարգի 30-րդ

կետը սահմանում է՝ որ ապրանքների ցանկը նախատեսված է որոշելու այն ապրանքները՝ որոնց համար խնդրարկվում է նշանի գրանցումը: Իհարկ է «ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ապրանքային նշանը չի կարող գրանցվել՝ եթե առկա է նույն կամ նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ գրանցում ունեցող շփոթելու աստիճան նման ապրանքային նշան՝ իսկ ԱԾՄԴ (ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգում) համաձայն նույն դասում՝ տվյալ դեպքում՝ 5-րդ՝ դասակարգվում են ըստ նույնատիպության: Հայցվորը կրճատել է 5-րդ դասում խնդրարկված ապրանքների ցանկը: Բողոքարկման խորհուրդը հենց հաշվի առնելով կարգի 101-րդ կետը և բողոքարկողի փաստարկը ապրանքների ցանկի կրճատման հետ կապված՝ անդրադարձել է ապրանքների առանձնահատկություններին և նշել՝ որ «թեպետ հայտատուի OVESO ապրանքային նշանի ապրանքների ցանկը կրճատվել է՝ սակայն այդ փոփոխությունը չի վերացրել սպառողի կողմից ապրանքները շփոթելու հնարավորությունը: Տվյալ դեպքում հնարավոր չէ հստակ ասել՝ թե «ԿԹԺԿԿ» հակադրված ապրանքային նշանով պաշտպանվող թուրմերը որ հիվանդությունների համար են նախատեսված: Եթե նույնատիպ դեղեր են և նույն նպատակների համար են օգտագործվում՝ ապա՝ նույնիսկ շփոթելու դեպքում, դա այդքան վտանգավոր չէ: Իսկ եթե ապրանքները (դեղերը) տարբեր նպատակների համար են օգտագործվում՝ ապա՝ կոլեգիայի կարծիքով՝ շփոթությունը կբերի ավելի ծանր հետևանքների՝ քանի որ մեկ դեղի փոխարեն գնորդը կարող է ձեռք բերել լրիվ մեկ այլը՝ հատկապես հաշվի առնելով՝ որ՝ օրինակ՝ սրտանոթային համակարգի հիվանդությունների բուժման համար դեղերը բաց են թողնվում առանց դեղատոմսի»՝ այսինքն՝ նույնատիպ ապրանքների շփոթությունը ակնհայտ է՝ որը և կարող է ծանր հետևանքների բերել:

Անդրադառնալով բժշկական գիտելիքներին՝ նշել է՝ որ խոսքը գնում է ապրանքների նույնատիպ լինելու պարագայում շփոթելու աստիճանի նմանությունը որոշելու մասին՝ այլ ոչ թե դեղը գնահատելու մասին՝ բացի այդ հենց կարգի 101-րդ կետն է ապրանքների առանձնահատկությունները հաշվի առնելու լիազորություն սահմանում շփոթելու աստիճանի նմանությունը որոշելու համար:

3. Հայցադիմումի «Գ.» թվագրված բաժնի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Հայցվորի ներկայացուցիչը բողոքարկման խորհրդի նիստի ժամանակ որպես փաստարկ բանավոր հայտնել է՝ որ «դեղամիջոցներ արտադրող խոշոր ընկերությունները իրենց ապրանքների պիտակների և տուփերի վրա՝ ապրանքային նշանի հետ մեկտեղ՝ գետեղում են նաև արտադրող ֆիրմայի լոգոն՝ ինչը զգալիորեն նվազեցնում է սպառողի մոտ շփոթության հավանականությունը (տվյալ դեպքում OVESO ապրանքային նշանի համար դա կլինի սպառողին քաջ հայտնի BAYER լոգոն)»:

Ղատարանին հայտնել է՝ որ շփոթելու աստիճան նմանության որոշման համար ոչ օրենքով ոչ էլ այլ իրավական ակտով նման չափանիշ սահմանված չէ և նման փաստարկը բողոքարկման խորհուրդը չէր կարող հաշվի առնել և որոշում կայացնելու հիմք ընդունել: Պարզապես որպես պատասխան, անդրադարձել է այդ հարցին՝ նշելով՝ որ «բողոքարկման խորհուրդը չկարևորեց այդ հանգամանքը՝ նկատի ունենալով՝ որ սպառողների քիչ մասն է ճանաչում արտադրող ֆիրմաների անունները և նրանց նշանները կամ իրենց ընտրությունը կատարելիս առաջնորդվում այդ սկզբունքով»:

4. Հայցադիմումի «Դ.» թվագրված բաժնի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Հայցվորը որպես հայցադիմումի հիմք նշել է բողոքարկման խորհրդի մեկ այլ գործով կայացված որոշում՝ սակայն օրենքի որևէ իրավական նորմով դա հիմք չի կարող հանդիսանալ բողոքարկման

խորհրդի վիճարկվող որոշումը անվավեր ճանաչելու համար« առավել ևս» հաշվի առնելով« որ խոսքը գնում է իրարից տարբեր հանգամանքներով կայացված որոշումների մասին:

Հայտնել է« որ բողոքարկման խորհրդի որոշումը կայացվել է օրենքի պահանջներին համապատասխան և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

5. Անդրադառնալով հայցվորի այն պնդմանը« որ բողոքարկման խորհրդի կողմից հայցվորի ներկայացված բողոքը մերժելը դա ապրանքային նշանի գրանցման վերահաստատումն է» հայտնել է, որ դա բացարձակապես անհեթեթություն է« հիմնված չէ ոչ իրավական և ոչ էլ առողջ տրմաբանության վրա: Ոչ մի օրենք և իրավական ակտ «ապրանքային նշանի գրանցման վերահաստատում» չի սահմանում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի նորմը սահմանում է« որ «Անվավեր ճանաչված ոչ իրավաչափ վարչական ակտը չի հանգեցնում իրավական հետևանքների: Սակայն, եթե մինչև ոչ իրավաչափ վարչական ակտի անվավեր ճանաչելը դրա կատարման կամ կիրառման հետևանքով որևէ անձի կամ որևէ համայնքի վնաս է պատճառվել» ապա դա ենթակա է հատուցման սույն օրենքի 7-րդ բաժնի դրույթներին համապատասխան»« իսկ 98-րդ հոդվածի նորմը սահմանում է« որ. «Եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է, ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է» ապա դրան համարժեք այլ դրության վերականգման միջոցով»:

64-րդ հոդվածում խոսքը գնում է մինչև վարչական ակտի՝ տվյալ դեպքում բողոքարկման խորհրդի 08.12.2008 թվականի որոշման« անվավեր ճանաչելը» որոշման կատարման կամ կիրառման հետևանքով« այսինքն՝ որոշումը կայացնելուց հետո ընկած ժամանակահատվածում» որևէ անձի կամ որևէ համայնքի վնաս պատճառելուն: Սույն նորմի պարզ ուսումնասիրությունից ակնհայտ է« որ խոսքը գնում է նախ վնասի և ապա 08.12.2008 թվականից հետո ընկած ժամանակահատվածում հասցված վնասի մասին» այն, ինչ հայցվորը չի հիմնավորել, թե ինչ վնաս է հասցվել բողոքարկման խորհրդի 08.12.2008 թվականի որոշմամբ« միաժամանակ նշել է« որ խոսքը կարող է գնալ միայն 08.12.2008 թվականից հետո ընկած ժամանակահատվածի համար:

Անդրադառնալով 98-րդ հոդվածի նորմին« հայտնել է, որ այն սահմանում է. «Եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է» ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները նախկին դրության«...»« այսինքն՝ խոսքը գնում է փաստացի դրության փոփոխության մասին» սակայն բողոքարկման խորհրդի որոշմամբ փաստացի դրության որևէ փոփոխություն տեղի չի ունեցել« նույնիսկ եթե տեղի էլ ունենար» ապա այն պետք է վերականգնվի մինչև 08.12.2008 թվականը եղած դրության:

Պատասխանողը դատարանին հայտնել է՝ ելնելով վերոգրյալ բոլոր կետերի առարկություններից, հայցվորի պահանջները անհիմն են և հայցադիմումը պետք է մերժվի յուրաքանչյուր պահանջի մասով ամբողջովին:

Գործի քննությանը ներկայացած պատասխանող կողմը պնդել է ներկայացված առարկությունները և դատարանին խնդրել հայցն ամբողջությամբ մերժել:

Երրորդ անձի առարկությունները և իրավական դիրքորոշումը Երրորդ անձ «Էվալյար» ՓԲԸ-ն դատարան հայցադիմումի պատասխան չի ներկայացրել:

Գործի քննության ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված երրորդ անձի որևէ ներկայացուցիչ գործի քննությանը չի ներկայացել: Դատարանը ղեկավարվելով ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածով գործը քննել է պատշաճ ծանուցված պատասխանողի բացակայությամբ:

3. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները
Լսելով կողմերի բացատրությունները, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝ դատարանը եզրակացրեց, որ հայցը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:
Դատաքննության ընթացքում դատարանը պարզված համարեց գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

-26.04.2007 թվականին «Էվալար» ՓԲԸ-ի անվամբ միջազգային պայմանագրի ուժով իրավական պահպանություն է ստացել «ԿԹԺԻԿԼ» բառային ապրանքային նշանը միջազգային գրանցման թիվ 877609» 16.12.2005 թվականի առաջնությամբ:

-ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության Բողոքարկման խորհուրդը 2008թ. դեկտեմբերի 8-ի նիստում քննարկել է «SCHERING AKTIENGESELLSCHAFT» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա. Գալոյանի 2008 թվականի նոյեմբերի 3-ի բողոքը գործակալության ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի IR 915768 միջազգային գրանցում ունեցող OVESO ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 05-րդ դասի բոլոր ապրանքների նկատմամբ 2008 թվականի մարտի 21-ի նախնական մերժման մասին որոշումը անվիտիոս թողնելու մասին կրկնական փորձաքննության որոշման վերանայման և IR 915768 միջազգային գրանցում ունեցող OVESO ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 05-րդ դասի սահմանափակված ապրանքների նկատմամբ տարածելու մասին:

-Բողոքարկման խորհրդի 08.12.2008 թվականի Որոշման համաձայն. «Մերժել ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա. Գալոյանի 2008թ. նոյեմբերի 3-ի բողոքը և OVESO (IR 915768) ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 05-րդ դասի բոլոր ապրանքների համար մերժելու մասին 2008թ. օգոստոսի 1-ի կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ»:

«Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման» ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 98--րդ կետի համաձայն. «98. Ձայնային նմանությունը հիմնականում որոշվում է հետևյալ հատկանիշներով՝

- 1) համեմատվող նշաններում մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ.
- 2) նշանը կազմող մոտ հնչյունների մոտիկությամբ.
- 3) մոտ հնչյունների և հնչյունային կապակցությունների միմյանց նկատմամբ դասավորվածությամբ.
- 4) համընկնող վանկերի առկայությամբ և դրանց դասավորվածությամբ.
- 5) նշանի մեջ պարունակվող վանկերի ընդհանուր քանակով.
- 6) նշաններում համընկնող հնչյունային կապակցությունների տեղով.
- 7) ձայնավորների կազմի մոտիկությամբ.
- 8) բաղաձայնների կազմի մոտիկությամբ.
- 9) նշանների համընկնող մասերի բնույթով.
- 10) նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, հատկապես բառային արտահայտությունների, այդ թվում՝ ֆիրմային անվանումների մեջ: Այս դեպքում համընկնող վանկերի առկայության կամ մի նշանը այլ նշանի մեջ մտնելու դեպքում նմանության ծագման որոշիչ գործոն է

համարվում համընկնող մասերի սկզբնական դիրքը: Շատ դեպքերում նշանների նման ճանաչման հիմք կարող է հանդիսանալ ինչպես սկզբնամասերի, այնպես էլ վերջնամասերի համընկնումը՝ տարբեր միջնամասերի դեպքում:

11) շեշտադրությամբ»:

Նույն կարգի 100-րդ կետի համաձայն. «100. Իմաստային նմանությունը որոշվում է հետևյալ հատկանիշների հիման վրա՝ 1) նշանների մեջ դրված նման հասկացության, գաղափարի, մասնավորապես տարբեր լեզուներով նշանների համընկնող իմաստի:

2) նշանների տարբերից որևէ համընկնող տարրի, որն առանձին իմաստ ունի և որի վրա ընկնում է տրամաբանական շեշտադրումը:

3) նշանների մեջ դրված հասկացությունների, գաղափարների հակադրության:

Նույն կարգի 101-րդ կետի համաձայն. «101. Սույն կարգի 98-100-րդ կետերում թվարկված հատկանիշները հաշվի են առնվում ինչպես առանձին, այնպես էլ տարբեր համակցություններում:

Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել որոշ շատ կարևոր հանգամանքներ:

շփոթելու աստիճան նմանությունը որոշելիս հաշվի է առնվում նաև այն ապրանքների առանձնահատկությունը, որոնց համար գրանցման է ներկայացված նշանը:

Եթե նշանը գրանցման է ներկայացված այնպիսի ապրանքների համար, որոնք իրացվում են միայն հատուկ սպառման շրջաններում, մասնավորապես՝ հատուկ մասնագետների օգնությամբ, կամ միայն մասնագիտացված կազմակերպություններին, օրինակ՝ բժշկի դեղատոմսերով, դեղատան մասնագետների կողմից, կամ տրանսպորտային, կապի, էներգետիկայի և այլ բնագավառների մասնագիտացված կազմակերպություններին իրացվող հատուկ ապրանքները, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ տվյալ պարագայում "շփոթելու աստիճան նմանությունը" տարածվում է և կիրառվում հատկապես այդ մասնագետների կամ կազմակերպությունների նկատմամբ, այլ ոչ թե բոլոր հնարավոր սպառողների: Եթե նշանը գրանցման է ներկայացված այնպիսի ապրանքների համար, որոնք թանկարժեք են կամ չեն համարվում լայն սպառման ապրանքներ, այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում, մինչև տվյալ ապրանքի ծեռքբերումը, սպառողը մանրազնին ուսումնասիրում է ապրանքը, ապա շփոթելու աստիճան նմանությունը որոշելիս հաշվի է առնվում նաև սպառողի անխուսափելի աչալուրջ վերաբերմունքը»:

Հարկ է նշել, որ բողոքարկման խորհրդում հայցվորի կողմից ըստ էության չի վիճարկվել «ԿԹԺԿԻ» բառային ապրանքային նշանի և «OVESO» ապրանքային նշանի իրար շփոթելու աստիճան նման լինելու փաստը:

Կարգի վերը նշված դրույթների մեկնաբանմամբ դատարանը հաշվի առնելով Կարգի 101-րդ կետի դրույթները՝ «98-100-րդ կետերում թվարկված հատկանիշները հաշվի են առնվում ինչպես առանձին»՝ այնպես էլ տարբեր համակցություններում»՝ «այսինքն՝ նշված հատկանիշներից մեկի կամ մի քանիսի առկայությունը» որը շփոթելու աստիճանի նմանություն է առաջացնում, բավարար է ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման ճանաչելու համար և մնացած այլ հատկանիշները կարող են հաշվի չառնվել: Կարգի 101-րդ կետի դրույթների մեկնաբանմամբ դատարանը եզրակացնում է, որ նշված կետը ըստ էության ոչ թե պարտադրում է « որ նման դեպքերում պետք է ճանաչվի շփոթության աստիճանի նման կամ չճանաչվի այդպիսին»՝ այլ նշում է « որ պետք է հաշվի առնվի վերը նշված կետում թվարկված հանգամանքները»՝ այսինքն՝ շփոթելու աստիճանի նմանության տարածումը և կիրառումը հատկապես այդ մասնագետների կամ կազմակերպությունների նկատմամբ»՝ այլ ոչ թե բոլոր հնարավոր սպառողների նկատմամբ: Վիճարկվող որոշման մեջ պատասխանողի կողմից մեկնաբանվել է « որ «Տվյալ դեպքում հնարավոր չէ հստակ ասել» թե «ԿԹԺԿԻ»

հակադրված ապրանքային նշանով պաշտպանվող թուրմերը ո՞ր հիվանդությունների համար են նախատեսված: Եթե նույնատիպ դեղեր են և նույն նպատակների համար են օգտագործվում՝ ապա նույնիսկ շփոթելու դեպքում, դա այդքան վտանգավոր չէ: Իսկ եթե ապրանքները (դեղերը) տարբեր նպատակների համար են օգտագործվում՝ ապա « կոլեգիայի կարծիքով» շփոթությունը կրերի ավելի ծանր հետևանքների» քանի որ մեկ դեղի փոխարեն գնորդը կարող է ձեռք բերել լրիվ մեկ այլը՝ « հատկապես հաշվի առնելով» որ « օրինակ՝ սրտանոթային համակարգի հիվանդությունների բուժման համար դեղերը բաց են թողնվում առանց դեղատոմսի»: Նման պայմաններում դատարանը եզրակացնում է, որ որոշման մեջ ապրանքների առանձնահատկություններին անդրադարձ կատարվել է և հաշվի առնելով այդ առանձնահատկությունները, վիճարկվող Որոշման մեջ նշվել է « որ «նույնիսկ այդ պարագայում շփոթելու աստիճանի նմանությունը կարող է ծանր հետևանքների բերել» հաշվի առնելով նաև» որ սրտանոթային համակարգի հիվանդությունների բուժման համար դեղերը բաց են թողնվում առանց դեղատոմսի» այսինքն՝ սպառողը դեղատանը շփոթելով կարող է «ԿԹԺԿԻ» դեղի փոխարեն պահանջել «OVESO» դեղը» և դեղատան աշխատողը չի կարող իմանալ, թե ինչ նպատակով է գնվում այդ դեղը»: Նման պայմաններում դատարանը եզրակացնում է, որ Որոշման մեջ առկա են բոլոր այն անհրաժեշտ հիմնավորումները որոնք հիմք են հանդիսացել բողոքը մերժելու համար:

Հայցվորի կողմից հայցադիմումում բերված՝ Կարգի 88-րդ կետի հետ կապված հիմնավորումների վերաբերյալ հարկ է նշել հետևյալը. Կարգի 30-րդ կետի համաձայն. «30. Ապրանքների ցանկը նախատեսված է որոշելու այն ապրանքները, որոնց համար խնդրարկվում է նշանի գրանցումը»:

«Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն՝ ապրանքային նշանը չի կարող գրանցվել՝ եթե առկա է նույն կամ նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ գրանցում ունեցող շփոթելու աստիճան նման ապրանքային նշան» իսկ ԱԾՄԴ-ի (ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգում) համաձայն՝ նույն դասում: Տվյալ դեպքում՝ 5-րդ դասում՝ դասակարգվում են ըստ նույնատիպության: Տվյալ դեպքում հայցվորը կրճատել է 5-րդ դասում խնդրարկված ապրանքների ցանկը: Նշված հանգամանքը հաշվի առնելով Բողոքարկման խորհուրդը ըստ էության անդրադարձել է ապրանքների առանձնահատկություններին, նշելով՝ որ «թեպետ հայտատուի OVESO ապրանքային նշանի ապրանքների ցանկը կրճատվել է « սակայն այդ փոփոխությունը չի վերացրել սպառողի կողմից ապրանքները շփոթելու հնարավորությունը: Տվյալ դեպքում հնարավոր չէ հստակ ասել՝ թե «ԿԹԺԿԻ» հակադրված ապրանքային նշանով պաշտպանվող թուրմերը ո՞ր հիվանդությունների համար են նախատեսված: Եթե նույնատիպ դեղեր են և նույն նպատակների համար են օգտագործվում՝ ապա՝ նույնիսկ շփոթելու դեպքում, դա այդքան վտանգավոր չէ: Իսկ եթե ապրանքները (դեղերը) տարբեր նպատակների համար են օգտագործվում՝ ապա « կոլեգիայի կարծիքով» շփոթությունը կրերի ավելի ծանր հետևանքների» քանի որ մեկ դեղի փոխարեն գնորդը կարող է ձեռք բերել լրիվ մեկ այլը՝ « հատկապես հաշվի առնելով» որ « օրինակ՝ սրտանոթային համակարգի հիվանդությունների բուժման համար դեղերը բաց են թողնվում առանց դեղատոմսի»՝ այսինքն՝ նույնատիպ ապրանքների շփոթությունը ակնհայտ է « որը և կարող է ծանր հետևանքների բերել»:

Կարգի 101-րդ կետով սահմանված բժշկական գիտելիքների հետ կապված հարկ է նշել, որ այն վերաբերվում է ապրանքների նույնատիպ լինելու պարագայում շփոթելու աստիճանի նմանությունը որոշելուն» այլ ոչ թե՛ դեղը գնահատելն: Կարգի 101-րդ կետը հենց իսկ սահմանում է ապրանքների առանձնահատկությունները հաշվի

առնելու լիազորություն՝ շփոթելու աստիճանի նմանությունը որոշելու համար:

Հայցվորը որպես փաստարկ հայտնել է նաև՝ որ «ղեղամիջոցներ արտադրող խոշոր ընկերությունները իրենց ապրանքների պիտակների և տուփերի վրա» ապրանքային նշանի հետ մեկտեղ՝ «գետեղում են նաև արտադրող ֆիրմայի լոգոն»՝ ինչը զգալիորեն նվազեցնում է սպառողի մոտ շփոթության հավանականությունը (տվյալ դեպքում OVESO ապրանքային նշանի համար դա կլինի սպառողին քաջ հայտնի BAYER լոգոն)»:

Հարկ է նշել, որ շփոթելու աստիճան նմանության որոշման համար որևէ իրավական ակտով նման չափանիշ սահմանված չէ և նշված չափանիշը չի կարող հիմք հանդիսանալ վիճարկվող որոշման վերացման համար:

Ներկայացված հայցադիմումով բերված պահանջի հիմնավորում որպես հայցվորի կողմից նշվել է բողոքարկման խորհրդի մեկ այլ գործով կայացված որոշում:

Հարկ է նշել, որ հայցվորի կողմից ներկայացված որոշման հետ կապված և սույն գործով փաստական հանգամանքներն ըստ էության տարբեր են:

Հարկ է նշել նաև, որ որևէ իրավական ակտով «ապրանքային նշանի գրանցման վերահաստատում» սահմանված չէ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի համաձայն. «Անվավեր ճանաչված ոչ իրավաչափ վարչական ակտը չի հանգեցնում իրավական հետևանքների: Սակայն, եթե մինչև ոչ իրավաչափ վարչական ակտի անվավեր ճանաչելը դրա կատարման կամ կիրառման հետևանքով որևէ անձի կամ որևէ համայնքի վնաս է պատճառվել՝ ապա դա ենթակա է հատուցման սույն օրենքի 7-րդ բաժնի դրույթների համապատասխան»:

Սույն օրենքի 98-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է՝ ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները նախկին դրության»...»՝ «այսինքն՝ խոսքը փաստացի դրության փոփոխության մասին է՝ տվյալ դեպքում բողոքարկման խորհրդի որոշմամբ փաստացի դրության որևէ փոփոխություն տեղի չի ունեցել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ, 118-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց`

SCHERING AKTIENGESELLSCHAFT ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «Էվալար» փակ բաժնետիրական ընկերության՝ «Վարչական ակտն անվավեր ճանաչելու և անվավեր վարչական ակտի հետևանքները վերացնելու» պահանջի մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Սույն վճիռն ղեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը: Սույն վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

Դատական ակտի ամսաթիվը:

12-08-2010

Ակտով հոգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ.:	0
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	30-09-2010
Էջերի քանակը:	200
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	30-09-2010
Էջերի քանակը:	200
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	